# Արձանագրություն

«Ստեփձոր 1» ՍՊԸ -ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Ստեփանավան համայնքում «Չքնաղ-1» ՓՀԷԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվության 2-րդ հանրային լսման վերաբերյալ

15/08/2025թ.

Հանրային երկրորդ լսումը իրականացվեց Ստեփանավան համայնքի ղեկավարի նստավայրում: Հանրային լսմանը ներկա էին նախաձեռնող խմբի անդամները, համայնքային աշխատակիցները, շահագրգիռ հանրության ներկայացուցիչներ:

Հանրային լսումը օրենքով սահմանված կարգով բացեց ՇՄՆ փորձաքննական կենտրոնի ներկայացուցիչ Շ.Կարապետյանը, ով մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության նկարագիրը, սպասվող ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, հիմնական նախագծի խոցելի հատվածը՝ հողային ռեսուրսների վրա, փիէկի շենքի կառուցման ընթացքում հատման ենթակա 60 ծառերի և փոխհատուցման ենթակա ծառաթփային կազմի քանակի և տեղադիրքի ընտրության վերաբերյալ մանրամասները և համայնքի դրական դիրքորոշումը:

Այնուհետ Նախաձեռնող ընկերության անդամները ներկայացրերցին «Չքնաղ-1» ՓՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ տեխնիկական, տնեսական ցուցանիշները:

Շահագրգիռ հանրության ներկայացուցչի կողմից հարց բարձրացվեց Ձորագետի մասով արդյոք սահմանափակումներ չկա փիէկեր կառուցելու համար և Չքնաղ գետը ինչքանով է հարմար փիէկերի կառուցման համար:

Շ.Կարապետյանը նշեց, որ ճիշտ է Ձորագետը դերիվացիոն խողովակաշարերով ծանրաբեռնված գետերի ցանկին է պատկանում, որտեղ արգելվում է փիէկեր շահագործել, սակայն նշված փիէկը օգտվելու է միայն Չքնաղ գետի ջրերից,որի համար ՇՄՆ կողմից ստացել է ջրօգտագործման թույլտվություն համապատասխան գետի էկոթողքը ապահովելով: Փորձաքննական գործընթացում հաշվի են առնվել նշված մտահագությունները, նաև առաջին հանրային լսմանը բարձրաձայնված բնակիչների հարցերը:

հարց հնչեց արդյոք ձկների ձվադրմանը չի խանգարելու փիէկի աշխատանքը:

պատասխանեց Շ. Կարապետյանը նշելով ձվադրման ժամանակ ձկները բարձրանում են դեպի գետի հունը, որը բավական հեռու է փիէկի տարածքից, նաև ընկերության ներկայացուցիչը պարզաբանեց որ ՇՄԱԳ-ում ներառվել են աշխատանքների բացառում ձվադրման ժամանակահատվածում՝ սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին:

հարց ինչեց կապված կլիմայական տվյալների վերլուծության և թարմության վերաբերյալ, հստակեցվեց որ ՇՄԱԳը կազմելիս նախաձեռնողը օգտվել է վերջին 2024թ հրատարակված Շինարարական կլիմայաբանության ձեռնարկից:

հաջորդ հարցը վերաբերում էր Ջրային կոմիտեին, կապված Ձորագետից օգտվող գյուղատնտեսական հողերի ոռոգման հետ, պատասխանվեց որ կոնկրետ վիճակագրություն առկա չէ և հիմնական հարցերը լուծվում են տեղական մակարդակով, համենայն դեպս Ջրային կոմիտեին հասցեագրված բողոքներ չեն եղել:

հարց՝ ազդակիր բնակավայրերի ընտրության կատարումը ինչպես է կատարվում, արդյոք Լոռի Բերդ բնակավայրը ինչու չի ընտրվել որպես ազդակիր,

Շ. Կարապետյանը նշեց, որ փորձաքննական գործընթացում դիտարկվել է ազդակիր բնակավայրերի հարցը և պարզաբանվել է, որ նախատեսվող գործունեությունը տարածվում է միայն Ստեփանավան և Ուրասար բնակավայրերի վարչական սահմաններում: Ըստ այդմ՝ Լոռի Բերդ համայնքի վրա ազդեցություն չի դիտարկվում, քանի որ գետից վերցվող և գետ վերադարձվող ջրաքանակը սահմանափակվում է նշված երկու բնակավայրերի տարածքով:

Շ. Կարապետյանը հետաքրքրվեց ընկերության ներկայացուցիչներից, աղբորսիչ ճաղավանդակների առկայության, ենթակայանի, տեղադիրքի, վթարների դեպքում յուղորսիչների առկայության վերաբերյալ:

հարց՝ բարձրացվեց համայնքի կողմից տրված երկու գրություններում ծառատունկի քանակական տարբերությունների վերաբերյալ: Ընկերությունը փաստեց որ պայմանավորվածությունը վերաբերում է 660 ծառերի փոխհատուցմանը: Համայնքի հետ կա ստորագրված հուշագիր, որով բոլոր պարտավորվածությունները կատարվելու են:

Հավելվեց որ ընկերության մասնագետը ՇՄԱԳը կազմելու համար ուսումնասիրել է տարածքը և փաստագրվել է տարբեր տեսակի ծառեր, որոնք 20 և ավելի տարեկան են և համապատասխան նշվել է ՇՄԱԳում:

հարց տրվեց Շ.Կարապետյանին ծառահատումը ինչ հետևանքներ կարող է ունենալ տվյալ հատվածի կենդանական աշխարհի վրա:

Հստակեցվեց որ էկոհամակարգի խախտումը բերելու է թե կենդանիների բնադրավայրերի լքման, թե հողի էռոզիոն երևույթների: Ընկերության ներկայացուցիչը հավելեց որ հանարավոր է կենդանիների հետ վերադարձ լինի բնադրավայրեր ըստ գրական տվյալների վերլուծության:

Շ. Կարապետյանը ամփոփեց հանրային լսումը, նշեց որ հաջորդը լինելու է 13:00 ին Ուրասար բնակավայրում:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ Շ.Կարապետյան

«Ստեփձոր 1» ՍՊԸ Վ.Հարությունյան

«ՍՏԵՓՁՈՐ-1» «СТЕПДЗОР-1» «STEPDZOR-1» 02898388